

Սեւան. — Lac de Sévan.

լով 'ի ծովն, ցածագունից յա-
րևմտից և բարձրագունից յա-
րևելից կուսէ. և համօրէն ե-
րեսացն տարածութիւն է 370
մղոն քառակուսի։ Ջուրքն 'ի
հաստակի բարեհամք են և
քաղցր, բաց յափանցն ուստեք,
յոր խառնեալ է հրաբուխ լե-
բանց արգասիք. և որպէս դի-
տեալ է բնակչաց կղզւոյն և
մերձակայ գեղջեցեաց՝ եօթն ամ
առնէ ջուրն և բարձրանայ և ա-
պա եօթն ամ զնստանի. բերէ աղ-
գի աղգի ձկունս, որպէս յիշե-
ցաք 'ի բնական նկարագրի աշ-
խարհիս (28), յորոց ապրեալ
առատապէս տանին 'ի գաւառս
և 'ի նահանգս հեռաւորս, սուղ
ինչ բաժ տալով յարքունիս. խայ-
տան և հաւք ջրասէրք 'ի վերայ
մկանանցն, զորս հերձանեն սա-
կաւ նաւակք ձկնորսաց, և լաս-
տափայտ մի 'ի պէտս վանացն
որ 'ի ՍԵՒԱՆ կղզւոջ։ Կղզիս այս
փոքրիկ որոյ կէս մղոն ևեթ է
շրջապատ, ունելով վերստ մի
ռուսական ընդ երկայնն և կէս
վերստ ընդ լայն, կայ յարևմտից
հիւսիսակողման ծովուն, սակա-
ւուք հեռի 'ի ցամաքէն, իբրև
գագաթն պորփիւրաքար լերին
սեւորակ ցցուեալ ըստ ջրոյն,
այլ դալարագեղ բուսաբերու-
թեամբ զուարճատես է աչաց,
մանաւանդ 'ի գարնանի՝ զար-
գարի քաղցրահոտ ծաղկամբք և
վայրենի մրգոք։ Ոչ է յայտ
սկիզբն բնակութեան կղզւոյն,
այլ զի յանուն Գեղամայ կոչի
ծովն՝ թուի և 'ի Հայկազնոյն
յայնմանէ զառաջինն շինեալ, և
'ի յետնոց ամուր հաստատեալ
'ի նմա՝ որոյ աւերակք երևին եր-
բեմն 'ի ներքոյ ջրոյն. և յիշեն
պատմիչք մեր 'ի սկիզբն և 'ի կէս
Ը դարու Հագարացւոց ձեռն
արկեալ և քանդեալ զայն. այլ
իբրև տեղի անքոյթ ապաստան
լիներ ինքնին կղզին յԹ և Ժ դարս
իշխանացն Սիւնեաց և Աշոտոյ
Բ արքայի։ Իսկ վանացն որ 'ի
նմա շինութիւն 'ի Լուսաւորչէն
մերմէ ասի սկզբնաւորեալ և 'ի
նմանէ կոչեցեալ Այս-է-վանք յոր-
մէ Սեւանն յորջորջեցաւ. մա-
ռուուն մի Ս. Յարութիւն անուն
շինեալ ասի Սրբոյն, և հիմունք